

Նախաբան

Երևանի քաղաքապետարանը նախաձեռնում է կանգառասրահների կառուցման և շահագործման ծրագիր, որի նպատակն է բարձրացնել քաղաքային տրանսպորտի սպասարկման որակը՝ ներդրելով միասնական տիպային լուծումներ, իրական ժամանակի տեղեկատվություն (LED չվացուցակներ) և տեսահսկման համակարգ:

Սույն մրցույթային փաթեթը սահմանում է ներդրողի (Տնտեսվարողի) ընտրության, իրավունքների և պարտականությունների ընդհանուր շրջանակը, ինչպես նաև համայնք-մասնավոր համագործակցության սկզբունքները՝ ուղևորների համար հարմար, անվտանգ և երկարաժամկետ սպասարկելի միջավայր ապահովելու նպատակով:

Ծրագրի հիմնական տրամաբանությունը «5+5» մոդելն է. պայմանագրի կնքման պահից յուրաքանչյուր կանգառասրահի կառուցումից/տեղադրումից 5 տարի անց այն դառնում է համայնքի սեփականություն, իսկ Տնտեսվարողը շարունակում է շահագործել և սպասարկել նույն կանգառասրահը ևս 5 տարի՝ մինչև պայմանագրի վերջնաժամկետը: Այսպիսով, Տնտեսվարողը ստանում է 10 տարվա շահագործման իրավունք:

Գովազդային քաղաքականությունը կառուցված է հավասարակշռության սկզբունքով. Տնտեսվարողը ստանում է գովազդային մակերեսների գործառնական և եկամուտների տնօրինման իրավունք (ՀՀ օրենսդրությանը համապատասխան), իսկ Քաղաքապետարանին ամեն տարի տրամադրվում է առնվազն 10% գովազդային ռեզերվ՝ հասարակական կարիքների հաղորդակցման համար՝ հստակ կարգով և ժամկետներով: Գովազդը չի կարող խաթարել տիպային նախագծով սահմանված կանգառասրահի տեսքը կամ նվազեցնել անվտանգության մակարդակը:

Տեխնիկական բաղադրիչը ներառում է տաղավարային կառուցվածք, նստարան, արտաքին LED չվացուցակ և տեսախցիկ՝ տվյալների անվտանգ փոխանակմամբ և կենտրոնացված կառավարմամբ Երևանի քաղաքապետարանի համակարգի հետ:

Կանգառասրահները տեղադրվում են քաղաքապետարանի հաստատած հասցեական ցանկով և ժամանակացույցով՝ առավելագույն սահմանված ժամկետներում, իսկ որակի ընդունումն իրականացվում է փաստաթղթավորված և փուլային ընդունման հնարավորությամբ:

Շահագործման փուլում Տնտեսվարողը պարտավոր է պահպանել սպասարկման նորմերը բարձր որակով՝ ապահովելով շաբաթական մաքրություն, պարբերական տեխնիկական զննումներ և թերությունների շտկում սահմանված օպերատիվ ժամկետներում: Վնասների կամ անսարքությունների դեպքում կիրառվում են կանխատեսելի պատասխանատվության մեխանիզմներ՝ օրական տուգանքների սանդղակ, Էական խախտումների շեմեր և պայմանագրի լուծման կարգ՝ քաղաքային ծառայությունների անընդհատությունը ապահովելու նպատակով:

Մրցույթը նախատեսվում է անցկացնել բաց, թափանցիկ աճուրդի սկզբունքով. հաղթող է ճանաչվելու այն մասնակիցը, ով կառաջարկի ամենաբարձր ամսական

վարձավճարը մեկ կանգառասրահի դիմաց՝ պահպանելով տեխնիկական, իրավական և ծառայության որակի պահանջները:

Վարձավճարների ինդեքսացիան սահմանվում է պարզ կանոններով և կիրառվում է միայն 5-րդ տարվանից՝ առավելագույնը երեք վերանայման սահմանափակմամբ:

Սույն փաթեթը նաև նկարագրում է.

- գովազդային մակերեսների տեղադրման թույլատրելի տեղերը,
- LED չվացուցակների և տեսահսկման համակարգերի նվազագույն տեխնիկական բնութագրերը,
- ընդունման/հանձնման, հաշվետվությունների և վերահսկողության ընթացակարգերը,
- լոտերի ձևավորման և հասցեների ճշգրտման հնարավորությունը,
- ֆորս մաժորի, վեճերի լուծման, օպերատորի փոխարինման և պայմանագրի լուծման կարգերը,
- գույքի քարտերի վարումը՝ կանգառասրահների կյանքի ցիկլի լիարժեք հաշվառման համար:

Սույն նախաբանը ծառայում է որպես փաթեթի ընթերցման ուղեցույց. այն ամփոփում է ծրագրի նպատակները, կառավարման մոդելը և գործառնական սկզբունքները, մինչդեռ մանրամասն կանոնները ներկայացված են հաջորդ բաժիններում:

Կանգառասրահների սեփականության և գովազդային մակերեսների օգտագործման կարգ

Կանգառասրահները, ներառյալ կառուցվածքային անբաժան մասերը, նստարանները, LED չվացուցակները, տեսախցիկները և ետնային պատերը (ստատիկ գովազդային մակերեսները ներառյալ), պայմանագրի կնքումից 5 (հինգ) տարի անց դառնում են Երևանի համայնքի սեփականություն: Սեփականության փոխանցման ժամկետը հաշվարկվում է յուրաքանչյուր կանգառասրահի տեղադրման ենթակա (ըստ տեղադրման ժամանակացույցի) և պայմանագրով ամրագրված ժամանակացույցից:

Սեփականության փոխանցումից հետո Տնտեսվարողը շարունակում է շահագործել կանգառասրահները, ինչպես նաև դրանց վրա տեղակայված գովազդային մակերեսները (ներառյալ՝ ստատիկ և ոչ ստատիկ լուծումները) ևս 5 (հինգ) տարի՝ մինչև պայմանագրի ավարտը: Այս ընթացքում Տնտեսվարողը պարտավոր է ապահովել կանգառասրահների պատշաճ սպասարկումն ու մաքրությունը՝ ապահովել կանգառասրահների պատշաճ սպասարկումն ու մաքրությունը՝ համաձայն պայմանագրի պահանջների:

Այսպիսով, Տնտեսվարողին տրամադրվում է կանգառասրահների և դրանց գովազդային մակերեսների շահագործման ընդհանուր 10 (տաս) տարվա իրավունք, ներառյալ գովազդային նյութերի տեղադրում, տարածում և դրանցից ստացվող եկամուտների տնօրինում:

Սեփականության փոխանցումը որևէ կերպ չի սահմանափակում Տնտեսվարողի շահագործման և եկամուտների տնօրինման իրավունքը. կանգառասրահներից և դրանց գովազդային մակերեսներից ստացվող բոլոր եկամուտները պայմանագրի ողջ ժամկետում պատկանում են բացառապես Տնտեսվարողին՝ բացառությամբ Երևանի քաղաքապետարանի համար սահմանված գովազդային ռեզերվ:

Գովազդային մակերեսների տեղադրումն ու շահագործումը թույլատրվում է հետևյալ կարգով.

1. Կանգառասրահի կողմային պատեր. Կանգառասրահի կողմային պատերը չեն հանդիսանում դրա անբաժան մաս: Դրանք կարող են չտեղադրվել կամ տեղադրվել գովազդային միջոցների կիրառմամբ (ստատիկ մակերես, սքրոլեր, Էկրան): Գովազդ կարող է տեղադրվել ինչպես դեպի ներս, այնպես էլ դեպի դուրս նայող կողմերում: Այն մակերեսները, որոնք չեն հանդիսանում կանգառասրահի անբաժան մաս, մնում են Տնտեսվարողի սեփականությունը և կարող են ապամոնտաժվել ըստ Տնտեսվարողի հայեցողության: Ապամոնտաժման դեպքում Տնտեսվարողը պարտավոր է կանգառասրահը վերադարձնել Երևանի քաղաքապետարանին՝ տիպային նախագծին համապատասխան տեսքով:
2. Կանգառասրահի հետևի պատը. գովազդային մակերես կարելի է տեղադրել հետևի պատերից միայն մեկի վրա՝ աջ կողմի պատի վրա: Գովազդը կարող է տեղադրվել այդ պատի երկու կողմում՝ դեպի ներս և դեպի դուրս նայող կողմերում: Ձախ կողմի պատի կիրառությունը թույլատրվում է բացառապես Երևանի քաղաքապետարանի հետ գրավոր լրացուցիչ համաձայնությամբ կամ այն դեպքում, երբ տվյալ կանգառի տեղադիրքն այնպիսին է, որ հետևի պատի դեպի դուրս նայող գովազդը չի կարող գործել/տեսանելի լինել: Եթե հետևի պատի գովազդային մակերեսը ստատիկ չէ (օր.՝ սքրոլեր, Էկրան), ապա Տնտեսվարողը կարող է պայմանագրի ժամկետի ավարտին այն ապամոնտաժել և տնօրինել ըստ իր հայեցողության: Սակայն Տնտեսվարողը պարտավոր է ապամոնտաժված մակերեսի փոխարեն (ապամոնտաժման պահի դրությամբ) ապահովել կանգառասրահի նախնական տեսքի վերականգնում՝ համաձայն հաստատված կանգառասրահի տիպային նախագծի էսքիզով սահմանված լուծման:

Գովազդային միջոցների տեղադրումը չի կարող փոխել կանգառասրահի արտաքին տեսքը կամ խաթարել տիպային նախագծով սահմանված դիզայնը: Կանգառասրահի հատուկ բրենդավորման (special branding) դեպքերում՝ օրինակ գունային ձևավորում, ձևափոխություն կամ այլ լուծումներ, Տնտեսվարողը պարտավոր է նախապես ներկայացնել առաջարկը և ստանալ Երևանի քաղաքապետարանի գրավոր համաձայնությունը: Առանց այդ համաձայնության որևէ բրենդավորում չի կարող իրականացվել:

Տեղադրվող բոլոր գովազդները պետք է համապատասխանեն ՀՀ «Գովազդի մասին» օրենքի պահանջներին, Երևանի քաղաքային ավագանու որոշմամբ

հաստատված արտաքին գովազդի տեղաբաշխման համայնքային կանոններին, ինչպես նաև այլ գործող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջներին, ներառյալ տեխնիկական անվտանգության չափանիշները, արգելված բովանդակության և ապրանքների ցանկը:

Քաղաքապետարանի գովազդային ռեզերվ

Կանգառասրահների գովազդային մակերեսների առնվազն 10%-ը պայմանագրային փաթեթում ամրագրվում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար, որպես ռեզերվ: Ռեզերվի օգտագործումը քաղաքապետարանի կողմից պարտադիր չէ:

Եթե քաղաքապետարանը տվյալ տարում չի ներկայացնում պահանջ, ապա այդ տարվա չօգտագործված ռեզերվը չի կուտակվում և չի փոխանցվում հաջորդ տարվա համար:

Ռեզերվի չափը հաշվարկվում է տարեկան կտրվածքով՝ ելնելով տվյալ տարվա պայմանագրային փաթեթում առկա գովազդային մակերեսների ընդհանուր քանակից:

Քաղաքապետարանը կարող է պահանջել ռեզերվի օգտագործումը միայն գրավոր հայտի հիման վրա: Գովազդի տեղադրման ծավալները, ժամկետները և վայրերը նախապես համաձայնեցվում են կողմերի միջև՝ տեղադրումից առնվազն 1 ամիս առաջ:

Տնտեսվարողը պարտավոր է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված գովազդի տեղադրման հայտին արձագանքել առավելագույնը **5** աշխատանքային օրվա ընթացքում: Եթե այդ ժամկետում պատասխան չի ստացվում, հայտը համարվում է լռությամբ համաձայնություն (հաստատված), և քաղաքապետարանը իրավունք ունի պահանջել ռեզերվի կիրառումը կազմակերպել: Ռեզերվի օգտագործման առավելագույն ժամկետը մեկ կանգառի մեկ գովազդային մակերեսում չի կարող գերազանցել 2 ամիս անընդմեջ և տարեկան ավելի քան մեկ անգամը՝ առանց Տնտեսվարողի հետ համաձայնության:

Գովազդային նյութի բովանդակությունը (հաստատված դիզայն/ուրվանկար/տեսանյութ) տրամադրվում է Երևանի քաղաքապետարանի կողմից: Տնտեսվարողը պարտավոր է իրականացնել գովազդի տպագրությունը, տեղադրումն ու հեռացումը իր հաշվին:

Ռեզերվի կիրառման իրավունքը գործում է պայմանագրի ողջ ժամանակահատվածում՝ անկախ կանգառասրահների սեփականության կարգավիճակից (մինչև և հետո սեփականության փոխանցումից):

Կիրառության օրինակ

Եթե Տնտեսվարողը շահագործում է 20 կանգառասրահ՝ յուրաքանչյուրում միջինում 2 գովազդային մակերեսով (ընդհանուր՝ 40 մակերես), ապա

յուրաքանչյուր տարվա համար քաղաքապետարանին հասանելի է 4 մակերես (40-ի 10%-ը): Քաղաքապետարանը կարող է այս 4 մակերեսները օգտագործել տարբեր կանգառներում և տեղափոխել գովազդն ըստ անհրաժեշտության: Սակայն նույն կանգառի նույն մակերեսի վրա չի կարող ռեգերվը կիրառել ավելի քան 2 ամիս անընդմեջ և առավելագույնը մեկ անգամ տարեկան՝ առանց Տնտեսվարողի հետ համաձայնության:

Ապահովագրության և վնասի հատուցման կարգ

Տնտեսվարողը, քանի դեռ կանգառասրահները հանդիսանում են իր սեփականությունը (պայմանագրի առաջին 5 տարիներին), իրավունք ունի, սեփական որոշմամբ, ապահովագրել դրանք իր միջոցներով: Այս դեպքում Տնտեսվարողը ստանում է ապահովագրական հատուցումը և պարտավոր է այն օգտագործել բացառապես կանգառասրահների վերականգնման կամ փոխարինման համար:

Սեփականության փոխանցումից հետո ապահովագրական պայմանագրերով նախատեսված հատուցումները ստանում է Երևանի քաղաքապետարանը կամ վերջինիս կողմից նշանակված օպերատորը: Նրանց կողմից ստացված հատուցումները ևս ենթակա են ուղղման բացառապես կանգառասրահների վերականգնման կամ փոխարինման համար:

Կանգառասրահի տեղափոխման կարգ

Եթե շահագործման ընթացքում առաջանում է անհրաժեշտություն կանգառասրահի տեղափոխման (օր.՝ ճանապարհային կազմակերպման փոփոխություն, շինարարական աշխատանքներ կամ այլ հանրային շահից բխող պատճառներ), ապա տվյալ պահին կանգառասրահի սեփականատերը պարտավոր է իր միջոցներով իրականացնել կանգառասրահի ապամոնտաժումն ու տեղափոխումը Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված նոր վայր:

Տնտեսվարողը պարտավոր է պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում ապահովել յուրաքանչյուր կանգառասրահի առավելագույնը երեք (3) տեղափոխում իր հաշվին, եթե նման անհրաժեշտությունը ծագում է քաղաքապետարանի կողմից ներկայացված հիմնավոր պատճառներով: Այս սահմանաչափը գերազանցող տեղափոխությունների դեպքում ծախսերի բաշխման կարգը կողմերը սահմանում են լրացուցիչ համաձայնագրով՝ հաշվի առնելով տեղափոխման պատճառները և ծավալը:

Տեղափոխված կանգառասրահը պետք է ամբողջությամբ վերականգնվի՝ համաձայն հաստատված տիպային նախագծի՝ ապահովելով դրա նախնական տեխնիկական և Էսթետիկ տեսքը:

Տնտեսվարողի այլ իրավունքները

Տնտեսվարողն ունի պայմանագրով ամրագրված ժամկետով կանգառասրահների և դրանց գովազդային մակերեսների շահագործման բացառիկ իրավունք:

Տնտեսվարողը իրավունք ունի տնօրինել կանգառասրահներում տեղադրված գովազդային մակերեսներից ստացված եկամուտները՝ բացառությամբ քաղաքապետարանի համար նախատեսված ռեզերվի:

Տնտեսվարողը ինքնուրույն է ընտրում գովազդատուներին, պայմանագրային գործընկերներին և գովազդային բովանդակության տեսակները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Տնտեսվարողը, քանի դեռ կանգառասրահները հանդիսանում են իր սեփականությունը (պայմանագրի առաջին 5 տարիներին), կարող է ապահովագրել դրանք սեփական միջոցներով և ստանալ ապահովագրական հատուցում վնասների դեպքում:

Տնտեսվարողը կարող է պայմանագրային աշխատանքները կամ դրանց մի մասը պատվիրել երրորդ անձանց (ենթակապալառուների)՝ պահպանելով պայմանագրով սահմանված բոլոր չափանիշները և պատասխանատվության սկզբունքը:

Տնտեսվարողը կարող է ներկայացնել առաջարկներ կանգառասրահների նախագծային, տեխնիկական կամ ֆունկցիոնալ բարելավումների վերաբերյալ: Երևանի քաղաքապետարանը պարտավոր է արձագանքել այդ առաջարկներին սահմանված ժամկետում:

Կանգառասրահի տեղադրման ընդունում

Կանգառասրահների տեղադրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է աշխատանքների որակի գնահատում: Կանգառասրահի ընդունման պարագայում՝ սահմանված կարգով գրավոր տեսքով հաստատվում է կանգառասրահի տեղադրման ամսաթիվը:

Այսպիսով, կանգառասրահը համարվում է տեղադրված, երբ.

- տեղադրված է տաղավարը (կառուցվածքը) և նստարանը,
- տեղադրված և գործարկված են չվացուցակը և տեսախցիկը,
- անհրաժեշտ դեպքերում կատարված է տարածքի բարեկարգումը (հարթեցում, բետոն կամ տոմետ՝ ըստ տարածքի նախագծի),
- ստորագրված է հանձնման-ընդունման ակտ Երևանի քաղաքապետարանի լիազորված մարմնի կողմից:

Եթե կանգառասրահի հիմնական կառուցվածքը տեղադրված է, սակայն չվացուցակի կամ տեսախցիկի տեղադրման, ինչպես նաև հոսանքի միացման աշխատանքները չեն ավարտվել, ապա կարող է կազմվել մասնակի ընդունման ակտ:

Մասնակի ընդունմամբ արձանագրվում է կանգառասրահի կառուցվածքի տեղադրման փաստը, իսկ ամբողջական ընդունումն իրականացվում է ոչ ուշ քան 30 (երեսուն) օրացույցային օրվա ընթացքում՝ սարքավորումների տեղադրումից և

հոսանքի միացումից հետո, եթե քաղաքապետարանի կողմից չկա ժամկետի երկարաձգման հաստատված համաձայնություն:

Եթե նշված ժամկետում աշխատանքները չեն ավարտվում, կանգառասրահը չի համարվում լիարժեք շահագործման ընդունված, բացառությամբ այն դեպքերի, երբ Տնտեսվարողը հիմնավորված գրավոր հայցով դիմել է Երևանի քաղաքապետարանին ժամկետի երկարաձգման համար և ստացել է քաղաքապետարանի կամ լիազորված մարմնի գրավոր հաստատում:

Բացի այդ, որոշ դեպքերում Երևանի քաղաքապետարանը կարող է որոշում կայացնել չվացուցակի և/կամ տեսախցիկի չտեղադրման վերաբերյալ (օր.՝ տեխնիկապես անհնարին կամ տվյալ վայրի առանձնահատկություններից բխող հիմնավոր պատճառներով): Նման որոշումը կամրագրվի պայմանագրին կից հավելվածով և կհամարվի լիարժեք իրավական հիմք կանգառասրահի ընդունման համար: Որոշումը պարտադիր կամրագրվի հավելվածով, որտեղ նշվում են՝ հասցեն, հանգամանքները, բացառության տևողությունը և վերանայման ժամկետը (հարկ եղած դեպքում): Այդ վայրում կանգառասրահը կարող է ընդունվել նաև լիարժեք ընդունման ակտով, և դա չի համարվում խախտում/թերություն Տնտեսվարողի համար:

Եթե կանգառասրահի տեղադրման որակի գնահատման արդյունքում արձանագրվում են թերություններ կամ պայմանագրի պահանջներին չհամապատասխանող աշխատանքներ, ապա Երևանի քաղաքապետարանի լիազորված մարմնի կողմից կազմվում է թերությունների արձանագրման ակտ: Ակտում պարտադիր նշվում են շտկման ենթակա կետերը և սահմանվում է առավելագույնը 10 (տասը) օրացույցային օր դրանց վերացման համար: Տնտեսվարողը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել բոլոր թերությունները և կրկին ներկայացնել կանգառասրահը ընդունման: Եթե թերությունները չեն վերացվում նշված ժամկետում, կրկնվում են կամ առաջացել են նոր թերություններ, քաղաքապետարանը իրավունք ունի դա դիտարկել որպես պայմանագրի խախտում և կիրառել պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցները (տուգանք կամ պայմանագրի լուծում):

Կանգառասրահների տեղադրման պայմանները և ժամանակացույց

Կանգառասրահները պետք է տեղադրվեն առավելագույնը 3 ամսվա ընթացքում՝ ըստ ժամանակացույցի և նվազագույն քանակների՝

1. մինչև «28» փետրվար 2026թ.՝ 4 կանգառ
2. մինչև «31» մարտ 2026թ.՝ 10 կանգառ
3. մինչև «30» ապրիլ 2026թ.՝ 10 կանգառ

Տնտեսվարողը կարող է տեղադրումն իրականացնել ավելի կարճ ժամկետներում:

Կանգառասրահների ցանկը, տեսակը, գույքը, սարքերը տրամադրվում են կից հավելվածներով, իսկ հասցեների հաջորդականությունը, ինչպես նաև փոխկապակցած այլ հանգամանքները սահմանում է Երևանի քաղաքապետարանը՝ ամրագրելով դրանք Տնտեսվարողի հետ պայմանագրում:

Երևանի քաղաքապետարանը Տնտեսվարողի հետ փոխադարձ և գրավոր համաձայնեցմամբ իրավունք ունի փոխել կանգառասրահների վայրերի և սարքերի տեղադրման հաջորդականությունը:

Կանգառասրահների տեղադրման ցանկը պետք է ներառի՝


- կանգառասրահի տեղադրման հասցեները և քանակները տվյալ հասցում,
- կանգառասրահի տեսակները (կանգառասրահների տիպային նախագիծը)՝ կիրառվող նյութերի նկարագրով և չափսերով (տաղավարի և գովազդային մակերեսների լայնություն, երկարություն, բարձրություն, նստարանների և կանգառասրահի անվանման տեղադրման բնութագրերը և այլ),
- կանգառասրահների միմյանցից հեռավարությունները իրար մոտ լինելու դեպքում:

Կանգառների քանակի համալրում մրցույթային փաթեթում

Մրցույթային փաթեթում նշված կանգառների քանակը համարվում է նվազագույն: Երևանի քաղաքապետարանը և Տնտեսվարողը կարող են փոխադարձ համաձայնությամբ լրացնել փաթեթը Նոր կանգառներով՝ պահպանելով հետևյալ պայմանները.

- Նոր կանգառների քանակը չի կարող գերազանցել տվյալ փաթեթում ամրագրված կանգառների քանակի 50%-ը:
- Նոր կանգառները կարող են լինել նույն կամ այլ տիպային նախագծերով՝ համաձայնեցված և հաստատված Երևանի քաղաքապետարանի կողմից:
- Նոր կանգառները տեղադրվում են նույն պայմաններով, ինչ նախնական փաթեթում (տիպային նախագիծ/նախագծեր, ժամկետ, գին, սպասարկում, պատասխանատվություն):
- Նոր կանգառների տեղադրման ժամկետները ավելացվում են ընդհանուր ժամանակացույցին՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
- Նոր կանգառների համալրումը իրականացվում է գործող պայմանագրի շրջանակում՝ առանց առանձին մրցույթի հայտարարելու անհրաժեշտության:

Կանգառասրահի տիպային տարբերակի նախագիծ



Ներկայումս դիտարկվող տիպային օրինակը տեղադրված է ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ փողոց, 4/2 հասցեում՝ DoubleTree by Hilton Yerevan City Centre հյուրանոցի հարևանությամբ: Տերմինալի վերին հատվածը նախատեսված է չվացուցակի տեղադրման համար:

Գծագրերը ներկայացվում են կից հավելվածով:

Կանգառասրահի տիպային նախագծի կառուցվածքային ճկունություն և ամրության ապահովում

Տիպային նախագիծը տրամադրվում է փոքր մոդուլային տարբերակով՝ 1 (մեկ) չափային միավորի հաշվարկով: Կանգառասրահի տեղանքի, գովազդային մակերեսների քանակի, տեղադրման ձևաչափի կամ ֆունկցիոնալ պահանջների հիման վրա թույլատրվում է տիպային նախագծի մեծացված տարբերակների կիրառում՝ մինչև 1.5 կամ 2 չափային միավոր:

Տիպային նախագծի հիման վրա կարող են իրականացվել կառուցվածքային կամ ամրության բարելավման փոփոխություններ, օրինակ՝ գովազդային վահանակների տակ կամ կողային հատվածներում լրացուցիչ կրող ուղքերի կամ հենարանների ավելացում, ամրակների կամ մետաղական պրոֆիլների խտացում:

Նման փոփոխությունները պետք է նախապես համաձայնեցվեն Երևանի քաղաքապետարանի հետ՝ տրված գծագրի և տեխնիկական սկարագրության

հիման վրա: Համաձայնեցված փոփոխությունները չեն համարվում տիպային նախագծից շեղում և ընդունվում են որպես դրա ենթատարբերակ:

Մեծացված տարբերակների կիրառման դեպքում թույլատրվում է գովազդային մակերեսների քանակի համաչափ ավելացում՝ մինչև նախագծային կառուցվածքի հնարավոր առավելագույն սահմանները՝ պահպանելով տիպային դիզայնի ամբողջականությունը անվտանգության պահանջները:

Տիպային նախագծի արդիականացման հնարավորություն

Կանգառասրահների տիպային նախագծի արդիականացումը կամ տեխնոլոգիական բարելավումը կարող է նախաձեռնվել ինչպես Երևանի քաղաքապետարանի, այնպես էլ Տնտեսվարողի կողմից՝ պայմանագրի գործողության ընթացքում:

Արդիականացման նպատակներն են՝

- տեխնիկական և էներգաարդյունավետ լուծումների ներդրում (օր.՝ արևային վահանակներ, նոր տեսակի լուսավորություն կամ սենսորային համակարգեր),
- անվտանգության, հարմարավետության կամ էսթետիկ ցուցանիշների բարձրացում,
- մոնիթորինգի, տվյալների փոխանցման կամ խելացի համակարգերի ինտեգրում,
- կիրառվող նյութերի կամ դիզայնի արդիականացում՝ տիպային տեսքի պահպանմամբ:

Տիպային նախագծի արդիականացման առաջարկը պետք է ներկայացվի գրավոր ձևով՝ ներառելով փոփոխությունների նկարագրությունը, տեխնիկական բնութագրերը և նախնական էսքիզները:

Երևանի քաղաքապետարանը կամ լիազորված մարմինը պարտավոր է արձագանքել առաջարկին առավելագույնը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Արդիականացման համաձայնեցված տարբերակը համարվում է գործող տիպային նախագծի նորացված ենթատարբերակ և ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրած հավելվածի ձևով:

Տրված կանգառասրահների տեղադիրքները կարող են ենթարկվել մանր ճշգրտումների՝ տեղում հայտնաբերված տեխնիկական կամ ինժեներական հանգամանքների պատճառով (օր.՝ ստորգետնյա կոմունիկացիաներ, ծառեր, մայթի լայնություն, երթևեկության անվտանգության գոտիներ, և այլն): Այդ շտկումները կատարվում են Երևանի քաղաքապետարանի և Տնտեսվարողի փոխադարձ համաձայնությամբ՝ չփոխելով ընդհանուր հասցեն կամ պայմանագրով նախատեսված կանգառների քանակը:

Տնտեսվարողին տրամադրվող արտոնություններ

Երևանի քաղաքապետարանը նախատեսում է խթանել կանգառասրահների կառուցումը և սպասարկումը մասնավոր ներդրողների միջոցով՝ նվազեցնելով վերջիններիս նախնական ֆինանսական բեռը: Այս նպատակով առաջարկվում է տրամադրել արտոնություններ, որոնք թույլ են տալիս Տնտեսվարողին կայունացնել ներդրումային ռիսկերը, արագացնել ներդրումների վերադարձը: Արտոնությունը ներառում է գովազդի տուրքի ազատում 5 տարիների համար: Տուրք չի գանձվում պայմանագրով նախատեսված կանգառի տեղադրման օրվանից 5 տարի, այնուհետև Տնտեսվարողը վճարում է գովազդի տուրք Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված կարգով:

Տնտեսվարողի և Երևանի քաղաքապետարանի պարտավորությունները

Տնտեսվարողը պարտավոր է իրականացնել կանգառասրահների արտադրում/ձեռքբերում/պատրաստում և տեղադրում՝ համաձայն հաստատված տիպային նախագծ(եր)ի, որում պարտադիր ներառվում է կանգառասրահը (տաղավար), նստարանը, չվացուցակը, տեսախցիկը:

Տնտեսվարողը պարտավոր է ապահովել կանգառասրահների համար անհրաժեշտ հոսանքի միացման աղբյուրը և իր միջոցներով վճարել սպառված էլեկտրաէներգիայի դիմաց: Երևանի քաղաքապետարանն աջակցում է Տնտեսվարողին անհրաժեշտ տեխնիկական պայմանների և թույլտվությունների ստացման հարցում:

Նոր կանգառասրահ տեղադրելու ժամանակ առաջացած անհրաժեշտության դեպքում Տնտեսվարողը պարտավոր է.

- իրականացնել գործող հին կանգառասրահի ապամոնտաժումը և այն հանձնել Երևանի քաղաքապետարանին սահմանված կարգով և վայրում (հասցեում), կամ՝ անհրաժեշտության դեպքում, ապահովել դրա տեղադրումը քաղաքապետարանի կողմից սահմանված նոր հասցեում, եթե կանգառասրահը պիտանի և տեխնիկապես սարքին է:
- Նոր կանգառասրահի տարածքի բարեկարգման անհրաժեշտության դեպքում իրականացնել տարածքի համապատասխան հարթեցում, ասֆալտապատում, բետոնացում և (կամ) տոմետապատում:

Հին կանգառասրահի ապամոնտաժման և նոր կանգառասրահի տեղադրման տարածքի բարեկարգման հետ կապված ծախսերը կրում է Տնտեսվարողը:

Շահագործողը պարտավոր է շաբաթական առնվազն մեկ անգամ ապահովել կանգառասրահների արտաքին բոլոր մակերեսների ամբողջական մաքրությունը՝ ներառյալ պատերը, նստարանը, չվացուցակը, տեսախցիկը, գովազդային տարրերը, կաշուն պաստառները, ստիկերները, գրաֆիտի, վանդալիզմի և նմանատիպ այլ հետևանքները կանգառասրահի տարրերից:

Մաքրությունը պետք է իրականացվի այնպես, որ կանգառասրահները գտնվեն հիգիենիկ, Էսթետիկ և օգտագործման համար հարմար վիճակում: Համայնքը ապահովում է միայն համայնքային տարածքի մակերեսի մաքրությունը

(ասֆալտապատ, տոմետապատ հատված) և աղբամանների դատարկումը (առկայության դեպքում):

Շահագործողը պարտավոր է 4 (չորս) ամիսը մեկ կազմակերպել կանգառասրահների համալիր լվացում հատուկ լվացող ավտոմեքենայի և պրոֆեսիոնալ միջոցների կիրառմամբ: Լվացման գործընթացը պետք է ընդգրկի կանգառասրահի ամբողջ կառուցվածքը վերնից ներքև՝ տանիքը, պատերը, ապակիները, նստարանը, գովազդային մակերեսները և բոլոր տեխնիկական տարրերը:

Մաքրման և լվացման աշխատանքների իրականացումը ենթակա է ֆիքսման և հաշվետվության՝ համաձայն գործողությունների հաստատված ժամանակացույցի՝ լուսանկարներով կամ տեսանյութով, որոնք տրամադրվում են Երևանի քաղաքապետարանին (կամ լիազորված մարմին), վերջինս կարող է նաև պահանջել իրական ժամանակում փաստավորման ապահովում՝ առցանց համակարգի միջոցով:

Տնտեսվարողը պարտավոր է շաբաթական հաշվետվություն տրամադրել Երևանի քաղաքապետարանին կանգառասրահների մաքրության մասով: Հաշվետվությունը պետք է ներառի կանգառների ցանկը, նկարագրություն, լուսանկարներ «մինչև և հետո», աշխատանքների նշում, շահագործողի տվյալներ: Լուսանկարների ժամանակագրության վերահսկման նպատակից ելնելով՝ լուսանկարները պետք է ներկայացվեն մետատվյալով (EXIF): Երևանի քաղաքապետարանը կարող է պահանջել լուսանկարների տեղում կատարումը՝ համապատասխան առցանց համակարգի միջոցով իրական ժամանակում լուսանկարահանում ապահովելու համար:

Հատուկ աղտոտումների դեպքում (օր.՝ ներկ, կպչուն նյութեր, հեղուկների թափում և այլն) շահագործողը պարտավոր է մաքրությունը կազմակերպել առավելագույնը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում՝ ինքնուրույն կամ Երևանի քաղաքապետարանի ծանուցումից հետո, առանց լրացուցիչ վճարի:

Տնտեսվարողը, իսկ սեփականության փոխանցումից հետո՝ համայնքը կամ վերջինիս կողմից լիազորված/պատվիրակված մարմինը, պարտավոր է ապահովել կանգառասրահների կոնստրուկտիվ և ֆունկցիոնալ տարրերի ամբողջականությունը և պատշաճ աշխատանքը: Վերականգնումը պետք է իրականացվի ըստ խախտումների արձանագրման կարգի սահմանված ժամկետների.

- վնասված ապակիների կամ տարրերի վերականգնում և փոխարինում (օրինակ՝ ճագած, կոտրված ապակի)՝ օրացույցային 10 օրվա ընթացքում
- ներկում կամ վերանորոգում՝ տարեկան մեկ անգամ կամ ըստ առաջացած անհրաժեշտության,
- մետաղական տարրերի փոխարինում, վնասված լինելու, ժանգի կամ նման դեպքերում՝ ըստ առաջացած անհրաժեշտության օրացույցային 15 օրվա ընթացքում,

- Չվացուցակի, տեսախցիկի կամ լուսային տարրերի աշխատանքի խափանման, տեխնիկական խնդիրների կամ նման դեպքերում՝ վերականգնում օրացույցային 5 օրվա ընթացքում, եթե չկան հիմնավորված և քաղաքապետարանին գրավոր տեղեկացված այլ հանգամանքներ (Տնտեսվարողի հնարավորություններից դուրս գտնվող սահմանափակումներ):
- Չվացուցակի, տեսախցիկի կամ լուսային տարրերի լիարժեք անգործունակ լինելու դեպքում վերականգնում կամ նորով փոխարինում օրացույցային 15 օրվա ընթացքում:

Շահագործողը, իսկ սեփականության փոխանցումից հետո՝ համայնքը կամ վերջինիս կողմից լիազորված/պատվիրակված մարմինը, պարտավոր է ամիսը մեկ անգամ կատարել կանգառասրահի պարբերական տեխնիկական զննում, ներառյալ ամրակների ստուգում, ապակիների վիճակի գնահատում, նստարանների, տանիքի և այլ տարրերի ամրության ստուգում, անվտանգության ապահովմանը նպաստող այլ գործառնություններ: Արդյունքները պետք է ներկայացվեն Երևանի քաղաքապետարանին կամ վերջինիս կողմից լիազորված մարմնին հաշվետվություն տեսքով, իսկ սեփականության փոխանցումից հետո համայնքը կամ վերջինիս կողմից լիազորված/պատվիրակված մարմինն է պարտավոր արդյունքների մասին հաշվետվություն տրամադրել Տնտեսվարողին՝ հաստատելու համար, որ կանգառասրահները գտնվում են պատշաճ վիճակում: Ամսական հաշվետվությունը պետք է ներառի.

- Յուրաքանչյուր կանգառասրահի տեխնիկական վիճակի գնահատում՝ պայմանագրով նախատեսված բալային սանդղակով,
- Կատարված աշխատանքների նկարագրություն,
- Հաջորդ ամսվա ընթացքում նախատեսվող աշխատանքների ցանկ:

Ամսական հաշվետվության բալային սանդղակը.

5 բալ՝ կանգառասրահը լիովին համապատասխանում է պայմանագրային պահանջներին (մաքուր, տեխնիկապես ամուր, առանց թերությունների):

4 բալ՝ կան ոչ էական թերություններ (օր.՝ փոքր մակերեսային կեղտոտվածություն, գրաֆիտի կամ մաշվածություն), որոնք չեն խանգարում բնականոն շահագործմանը և կարող են վերացվել մինչև հաջորդ զննումը:

3 բալ՝ միջին ծանրության թերություններ (օր.՝ նստարանի վնասում, ապակու ճաք, լուսավորության մասնակի խափանում), որոնք պետք է վերացվեն առավելագույնը 10 օրացույցային օրվա ընթացքում կամ սահմանված այլ ժամկետներում:

2 բալ՝ լուրջ թերություններ (օր.՝ ապակու կոտրում, մետաղական տարրերի վնասում, չվացուցակի կամ տեսախցիկի անգործունակություն), որոնք պետք է վերացվեն առավելագույնը 5 օրացույցային օրվա ընթացքում կամ սահմանված այլ ժամկետներում:

1 բալ՝ վթարային վիճակ կամ հանրային անվտանգությանը սպառնացող պայմաններ (օր.՝ տանիքի փլուզման վտանգ, կրող կոնստրուկցիաների դեֆորմացիա): Այս դեպքում Տնտեսվարողը պարտավոր է վերականգնում իրականացնել անհապաղ, բայց ոչ ուշ քան 1 օրացույցային օրվա ընթացքում, եթե չկա սահմանված այլ ժամկետ:

Եթե կանգառասրահը ստանում է 3 կամ ավելի ցածր բալ երեք ամիս անընդմեջ, ապա դա համարվում է պայմանագրի էական խախտում: Այդ դեպքում Երևանի քաղաքապետարանը իրավունք ունի կիրառել պայմանագրով նախատեսված տուգանքները կամ սկսել պայմանագրի լուծման գործընթաց:

Լուտում ներառված, սակայն պայմանագրով փոխարինման ենթակա կանգառասրահները մինչև պայմանագրով սահմանված փոխարինման ժամկետի հասնելը, սպասարկվում են Երևանի համայնքի կողմից: Եթե փոխարինման ժամկետին Տնտեսվարողը չի իրականացնում կանգառասրահի փոխարինումը, ապա նա պարտավոր է անմիջապես ստանձնել տվյալ կանգառասրահի շարունակական սպասարկումն ու մաքրությունը մինչև դրա փաստացի փոխարինումը:

Պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման պատասխանատվություն

Պարտավորության չկատարման կամ թերի կատարման դեպքում այն համարվում է պայմանագրի խախտում և արձանագրվում է ակտով: Ակտում նշվում են խախտման բնույթը և այն վերացնելու համար սահմանված ժամկետը՝ ըստ նախապես սահմանված կարգավորման ժամկետների (օր.՝ 2, 10 կամ 15 օրացույցային օր՝ կախված խախտման տեսակից):

Եթե խախտումը չի վերացվում սահմանված ժամկետում, ապա կիրառվում են հետևյալ պատասխանատվության միջոցները.

- **Կանգառասրահի տեղադրման կամ վերականգնման ժամկետների խախտում՝** 3,000 դրամ յուրաքանչյուր կանգառասրահի համար, յուրաքանչյուր ուշացած օրվա համար:
- **Կանգառասրահների մաքրության ապահովման ժամկետի խախտում՝** 3,000 դրամ յուրաքանչյուր կանգառասրահի համար, յուրաքանչյուր ուշացած օրվա համար:
- **Տեխնիկական խափանումների վերացման ժամկետի խախտում** (չվացուցակ, տեսախցիկ և այլն)՝ 2,000 դրամ յուրաքանչյուր կանգառասրահի համար, յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

Խախտումը համարվում է էական և հանդիսանում է պայմանագրի լուծման հիմք, եթե ուշացումը գերազանցում է.

- 30 օր՝ կանգառասրահի տեղադրման կամ վերականգնման դեպքում,
- 15 օր՝ մաքրության ապահովման դեպքում,
- 20 օր՝ տեխնիկական խափանումների վերացման դեպքում:

Պայմանագրի լուծման հիմքեր

Պայմանագրի լուծման գործընթացը կարող է սկսվել, եթե.

- կանգառասրահն օգտագործել է իր նշանակության էական կամ բազմակի խախտումներով,
- արձանագրված է էական խախտում (վերոնշյալ շեմերի գերազանցմամբ),
- Տնտեսվարողը սահմանված վճարները և (կամ) կիրառված տուգանքները չի կատարել՝ դրանց վճարման ժամկետը լրանալուց հետո երկու ամսից ավելի,

- Շահագործողը իր ստանձնած պարտավորությունները խախտել է, և գրավոր ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կամ սահմանված ժամկետում չի վերացրել խախտումը, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ:

Այս դեպքերում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն սկսել պայմանագրի լուծման գործընթացը՝ գրավոր ծանուցմամբ:

Ցուգանքների առավելագույն սահման

Յուրաքանչյուր կանգառասրահի համար հաշվարկվող տուգանքների տարեկան ընդհանուր չափը չի կարող գերազանցել տվյալ կանգառասրահի մեկ տարվա պայմանագրային վարձավճարի գումարը, և լինել ոչ ավել, քան 1,000,000 (մեկ միլիոն) դրամ:

Իրավասու վեճերի լուծման ձևաչափ

Կողմերը պարտավոր են առաջացած ցանկացած վեճ կամ տարաձայնություն նախ փորձել լուծել բանակցությունների և փոխադարձ համաձայնության միջոցով:

Եթե բանակցությունների միջոցով վեճը չի լուծվում, ապա այն ենթակա է լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վեճերը քննվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ հնարավոր է վեճերը լուծել նաև արբիտրաժի միջոցով՝ ըստ ՀՀ գործող օրենսդրության պահանջների:

Բոլոր վեճերի կարգավորման ընթացքում կողմերը պարտավոր են ձեռնպահ մնալ գործողություններից, որոնք կարող են վնասել պայմանագրի առարկան կամ խաթարել կանգառասրահների բնականոն շահագործումը:

Կանգառասրահի գույքի քարտի բացում և վարում

Յուրաքանչյուր նոր կանգառասրահի ընդունման (ներառյալ մասնակի ընդունումը) պահից բացվում է կանգառասրահի գույքի քարտ (այսուհետ նաև «Քարտ»):

Գույքի քարտը հանդիսանում է կանգառասրահի կոնստրուկցիաների, տեխնիկական սարքավորումների և դրանց սպասարկման պատմության լիարժեք գրանցման և վերահսկման գործիք: Այն ապահովում է կանգառի կյանքի ցիկլի թափանցիկությունը՝ սկսած տեղադրումից մինչև համայնքին հանձնումը:

Գույքի քարտը կազմվում է թղթային կամ էլեկտրոնային ձևաչափով երկու օրինակով. մեկ օրինակը պահվում է Երևանի քաղաքապետարանի (կամ լիազորված մարմնի) մոտ, մյուս օրինակը՝ Տնտեսվարողի մոտ: Բացման պահին գույքի քարտում գրանցվում են.

- կանգառասրահի տեղադրման հասցեն/կոորդինատները
- կանգառասրահի տեղադրման ամսաթիվը,

- տեղադրված կոնստրուկցիաների և սարքավորումների ցուցակը (տաղավար, նստարան, չվացուցակ, տեսախցիկ, լուսավորություն),
- գույքի սկզբնական տեխնիկական վիճակի նկարագրությունը:

Վարման ընթացքը

Գույքի քարտում պարտադիր գրանցվում են.

- պլանային և արտահերթ սպասարկման աշխատանքները,
- վնասման, վերանորոգման կամ փոխարինման բոլոր դեպքերը,
- կանգառասրահի վերաբերյալ արձանագրված բոլոր միջադեպերը:

Գրանցումները կատարվում են ըստ ամսաթվի և հաջորդական համարակալմամբ: Գույքի քարտը լրացվում և վարվում է մինչև կանգառասրահի շահագործման ավարտը:

Երևանի քաղաքապետարանի պարտավորությունները

Տրամադրել կանգառասրահների տեղադրման հասցեների ցանկը, Էսքիզը/տեսակները և հաջորդականությունը:

Արձագանքել ներկայացված փոփոխությունների և առաջարկների վերաբերյալ առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Տնտեսվարողին նախապես ծանուցել այն փոփոխությունների մասին, որոնք ազդում են կանգառասրահների շահագործման պայմանների վրա:

Չխոչընդոտել Տնտեսվարողի բնականոն գործառույթներին և գործունեությանը, պայմանով, որ վերջինս գործում է պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում:

Համաձայնեցումների կարգ

Կանգառասրահների նախագծային, կառուցվածքային կամ ֆունկցիոնալ փոփոխությունների վերաբերյալ ցանկացած առաջարկ Տնտեսվարողի կողմից պետք է ներկայացվի Երևանի քաղաքապետարանին կամ նրա կողմից լիազորված մարմնին պաշտոնական կապի միջոցներով:

Քաղաքապետարանը կամ նրա կողմից լիազորված մարմինը պարտավոր է առաջարկը դիտարկել և արձագանքել առավելագույնը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված փաստաթղթերը համարվում են թերի կամ անհամապատասխան, քաղաքապետարանը վերադարձնում է Տնտեսվարողին՝ բացատրությամբ և լրացման պահանջով:

Տնտեսվարողը պարտավոր է թերությունները վերացնել և կրկին ներկայացնել առաջարկը առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Առանց Երևանի քաղաքապետարանի գրավոր հաստատման որևէ փոփոխություն կանգառասրահում չի կարող իրականացվել:

Եթե Տնտեսվարողը փոփոխություն է իրականացրել առանց հաստատման, ապա քաղաքապետարանը պարտավոր է գրավոր ծանուցումով պահանջել փոփոխության վերացում և կանգառասրահի վերադարձ նախնական տեսքին առավելագույնը 10 (տաս) օրացույցային օրվա ընթացքում:

Երևանի քաղաքապետարանն իր հերթին կանգառասրահների շահագործման ընթացքում իրականացվելիք փոփոխությունների, հավելյալ պահանջների կամ նոր տեխնիկական պայմանների սահմանման անհրաժեշտության դեպքում պարտավոր է նախապես գրավոր տեղեկացնել Տնտեսվարողին՝ տրամադրելով բավարար ժամկետ փոփոխությունը կատարելու կամ դրա վերաբերյալ հիմնավորված առարկություն ներկայացնելու համար:

Եթե կողմերից որևէ մեկը սահմանված ժամկետում չի արձագանքում ներկայացված առաջարկին կամ ծանուցմանը, ապա այն համարվում է չհաստատված (մերժված) և չի կարող գործածվել որպես համաձայնություն:

Կողմերի միջև հաղորդակցությունը պետք է իրականացվի բացառապես պաշտոնական կապի միջոցներով (պայմանագրով ամրագրված), իսկ այլ եղանակներով հաղորդակցությունը (օր.՝ հեռախոսային կամ անհատական հաղորդագրություններ) դիտարկվում է ոչ պաշտոնական և չի կարող իրավական հետևանք առաջացնել:

Տնտեսվարողը կարող է ներկայացնել նաև կանգառասրահների տեխնիկական, ֆունկցիոնալ կամ էսթետիկ բարելավումների առաջարկներ (օր.՝ ավելի բարձրորակ սարքավորումների տեղադրում, լրացուցիչ պաշտպանական լուծումներ, սպասարկման պարզեցնող մեխանիզմներ): Նման բարելավումները թույլատրվում են բացառապես Երևանի քաղաքապետարանի նախնական գրավոր հաստատմամբ և չեն կարող խաթարել տիպային դիզայնը կամ նվազեցնել անվտանգության մակարդակը: Տիպային նախագծին ինտեգրված բարելավումները դառնում են կանգառասրահի անբաժան մաս և ղեկավարվում են նույն սեփականության ռեժիմով, իսկ ոչ ստատիկ գույազային միջոցները մնում են Տնտեսվարողի սեփականությունը պայմանագրի ավարտին ապամոնտաժման իրավունքով և կանգառասրահի նախնական տեսքի վերականգնման պարտավորությամբ:

Ընդհանուր արձագանքման ժամկետ

Եթե պայմանագրով կամ հավելվածներում այլ ժամկետ նշված չէ, կողմերը պարտավոր են արձագանքել միմյանց գրավոր հայտերին և առաջարկներին առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պատասխան չի տրվում նշված ժամկետում, ապա հայտը կամ առաջարկը համարվում է չհաստատված և իրավական հետևանք չի առաջացնում:

Պայմանագրի փոփոխությունների կարգ

Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

Պայմանագրի ցանկացած փոփոխությունն ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, եթե այն ամրագրված է պայմանագրին կից հավելվածով, որը ստորագրված է կողմերի կողմից: Բոլոր փոփոխությունները պարտադիր ունենում են նույն իրավաբանական ուժը, ինչ պայմանագիրը: Առանց գրավոր հավելվածի ստորագրման և կողմերի ստորագրությունների փոփոխությունները իրավաբանական հետևանք չեն առաջացնում:

Վնասման և վերականգնման պատասխանատվություն

Եթե կանգառասրահի վնասումը, ներառյալ տեխնիկական ապահովումը, գույքերն ու սարքերը, տեղի է ունենում բնական մաշվածության, տեխնիկական անսարքության, բնական աղետի հետևանքով կամ երրորդ անձի մեղքով (օր.՝ վթար, վանդալիզմ, ուժեղ քամու հետևանք, մեծ չափի ապակու կոտրում և այլն), ապա Տնտեսվարողը, քանի կանգառասրահը հանդիսանում է իր սեփականությունը (առաջին 5 տարիներին), պարտավոր է այն վերականգնել ըստ նախատեսված տեսքի և պարագաների իր միջոցներով և սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 30 օրացույցային օրվա ընթացքում վնասման արձանագրման պահից, եթե դրանց վերացումը չի հակասում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին կամ ապահովագրական, փոխհատուցման կամ այլ ընթացակարգերին:

Սեփականության փոխանցումից (հաշվարկված պայմանագրով սահմանված ժամկետից) հետո մանր վնասների վերականգնումը (օր.՝ ապակու կոտրում, նստարանի, լուսավորության, տեսախցիկի կամ չվացուցակի խափանում) շարունակում է մնալ Տնտեսվարողի պարտականությունը պայմանագրի ամբողջ 10 տարվա ընթացքում, իսկ խոշոր վնասները (օր.՝ ավտովթարից կամ ուժեղ բնական աղետից առաջացած կառուցվածքային վնասներ) համարվում են Երևանի քաղաքապետարանի կամ նրա կողմից նշանակված օպերատորի պարտականություն:

Մանր վնասներ համարվում են այն վնասները, որոնք.

- չեն ազդում կանգառասրահի հիմնական կոնստրուկցիայի ամրության վրա,
- վերականգնվում են արագ (մինչև 10-15 օրացույցային օր),
- ունեն համեմատաբար ցածր վերականգնման արժեք. վերականգնման արժեքը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) դրամը կամ կանգառասրահի տվյալ պահի ամբողջական արժեքի 25%-ը:

Օրինակներ.

- ապակու կոտրում կամ ճաքում,
- նստարանի վնասում կամ բացակայող մաս,
- լուսավորության խափանում,
- չվացուցակի կամ տեսախցիկի տեխնիկական անսարքություն,
- արտաքին գրաֆիտի, ներկման անհրաժեշտություն:

Խոշոր վնասներ համարվում են այն վնասները, որոնք.

- խթարում են կանգառասրահի կառուցվածքային ամրությունը կամ ամբողջականությունը,

- պահանջում են ամբողջական վերակառուցում կամ փոխարինում:

Օրինակներ.

- տանիքի փլուզում,
- ամբողջական ապակեպատման ոչնչացում,
- կրող մետաղական մասերի դեֆորմացիա,
- կանգառասրահի ամբողջական տեղափոխման կամ վերակառուցման անհրաժեշտություն:

Բոլոր դեպքերում կանգառասրահը, ներառյալ տեխնիկական ապահովումը, գույքերն ու սարքերը, պետք է վերականգնվի այնպես, որ իրենց արտաքին տեսքով և տեխնիկական չափանիշներով համապատասխանի նախապես հաստատված և պայմանագրով սահմանված նախագծային լուծումներին:

Երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվություն

Կանգառասրահը շահագործողը պատասխանատվություն է կրում կանգառասրահների և դրանց սարքավորումների շահագործման ընթացքում քաղաքացիներին կամ երրորդ անձանց պատճառված վնասների համար, ներառյալ մարմնական վնասվածքները, գույքային վնասները կամ այլ հետևանքները, եթե դրանք առաջացել են կանգառասրահների անսարքության, շահագործման պայմանների խախտման, պատշաճ սպասարկման բացակայության կամ Տնտեսվարողի գործողությունների հետևանքով:

Կանգառասրահի փոփոխությունների կարգ

Տնտեսվարողին արգելվում է առանց Երևանի քաղաքապետարանի նախնական և գրավոր համաձայնության կատարել կանգառասրահի նախագծային կամ կառուցվածքային որևէ փոփոխություն:

Այդ թվում՝

- կանգառասրահի տեղափոխում կամ ապամոնտաժում,
- ձևափոխում (չափերի, նյութերի, գույների կամ դիզայնի փոփոխություն),
- հավելյալ տարրերի տեղադրում կամ հեռացում (օր.՝ գովազդային վահանակներ, նստարաններ, լուսավորություն, սարքավորումներ),
- կանգառասրահի արտաքին կամ ներքին տեսքի փոփոխություն:

Բոլոր փոփոխությունները պետք է իրականացվեն բացառապես Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծերի և գրավոր թույլտվության հիման վրա: Ամեն դեպքում եթե Տնտեսվարողը կատարում է նման փոփոխություն առանց քաղաքապետարանի գրավոր թույլտվության, ապա պարտավոր է առավելագույնը 10 օրացույցային օրվա ընթացքում վերականգնել կանգառասրահի նախնական տեսքը և վիճակը: Վերականգնումը չիրականացնելու դեպքում խախտումը կարող է դիտարկվել որպես Էական և հիմք հանդիսանալ պայմանագրի լուծման համար:

Կանգառասրահների վերահսկողության հավելյալ տարբերակ

Յուրաքանչյուր կանգառասրահում պետք է տեղադրված լինի QR կոդ, որը հղում է «Ակտիվ քաղաքացի» հավելվածին՝ մաքրության խախտման կամ վնասվածքների արագ արձանագրման համար:

«Ակտիվ Քաղաքացի»-ով ստացված հայտը՝ լուսանկարով և վայրի նշումով, կարող է դիտարկվել որպես պաշտոնական արձանագրման հիմք և քանակով վերահսկելի՝ պայմանագրի խախտման փաստի ձևակերպման համար: Հայտը փոխանցվում է Տնտեսվարողին, որպես կատարողի և հսկվում է կատարման ժամկետը:

QR կոդի պատրաստման և տեղադրման կարգը

QR կոդը պետք է պատրաստվի և տեղադրվի Տնտեսվարողի կողմից՝ կանգառասրահի մետաղական կառկասի վրա, հեշտ տեսանելի վայրում: QR կոդի կրիչի չափսը նախնական նախատեսվում է մոտ **15×15 սմ**, սակայն ոչ պակաս, քան **10×10 սմ**: Կրիչը պետք է պատրաստված լինի **մետաղական կամ բարձրորակ պլաստիկ կոմպոզիտից**՝ ապահովելով հակավանդալ և եղանակակալուն պաշտպանություն:

Կախված տեխնիկական լուծումից՝ կանգառասրահի վրա կարող է տեղադրվել մեկ միասնական QR կոդ կամ երկու առանձին QR կոդ (iOS և Android հավելվածների համար): QR կոդի ձևավորումը Տնտեսվարողին տրամադրում է Երևանի քաղաքապետարանը: Դիզայնը պետք է ապահովի կոդերի հեշտ ընթերցելիություն:

QR կոդի կոդքին պարտադիր է տեղադրել տեղեկատվական կարճ տեքստ հայերեն և անգլերեն լեզուներով, օրինակ.

- «Ակտիվ Քաղաքացի» հավելվածի լոգո,
- «Ակտիվ Քաղաքացի» անվանում,
- Տեքստ. «Սկանավորեք մաքրության և վնասվածքի մասին արագ հաղորդելու համար»:

Տնտեսվարողը պատասխանատու է QR կոդերի նախապատրաստման, տպագրության/արտադրման, տեղադրման և անհրաժեշտության դեպքում՝ ժամանակին փոխարինման համար՝ պայմանագրի ողջ ընթացքում:

Տնտեսվարողի փոխարինման կարգը

Եթե Տնտեսվարողը խախտում է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և նույնատիպ կամ նմանատիպ խախտումներ արձանագրվում են 3 անգամ՝ 60 օր շարունակական ժամանակահատվածում, կամ եթե խախտումը բնույթով էական է (օրինակ՝ կանգառների չկառուցում, մաքրության չապահովում, վթարային վիճակ, հանրային անվտանգությանը սպառնացող պայմաններ), ապա Երևանի քաղաքապետարանը իրավունք է ստանում միակողմանիորեն լուծել պայմանագիրը:

Յուրաքանչյուր արձանագրված խախտումից հետո Տնտեսվարողին տրվում է համապատասխան առավելագույն ժամանակ խախտումը վերացնելու համար՝ կախված խախտման տեսակից և հաշվարկված խախտման արձանագրման/հայտնաբերման պահից:

Մինչև խախտման ժամկետի լրանալը նույնատիպ խախտում կրկին չի կարող արձանագրվել նույն կանգառասրահի համար: Տուգանքները կիրառվում են այն դեպքում, եթե խախտումը չի վերացվել սահմանված ժամկետում կամ կրկնվել է ժամկետի ավարտից հետո:

- Վթարային վիճակ, հանրային անվտանգությանը սպառնացող պայմաններ՝ 1 օրացույցային օր,
- Մաքրության խախտում՝ 2 օրացույցային օր,
- Վնասված նստարան կամ ապակի՝ 10 օրացույցային օր,
- Տեսախցիկի, չվացուցակի կամ լուսավորության բացակայություն՝ մինչև 15 օրացույցային օր,
- Կանգառասրահի չկառուցում ըստ ժամանակացույցի՝ մինչև 15 օրացույցային օր:

Եթե նշված ժամկետում խախտումը վերացվում է, ապա արձանագրությունը համարվում է լուծված: Եթե խախտումը չի վերացվում, ապա այն դիտարկվում է որպես ամրագրված խախտում և հաշվարկվում է պայմանագրի լուծման հիմք ձևավորող դեպք:

Ֆորս մաժոր

Ֆորս մաժորային իրավիճակների դեպքում՝ (օրինակ՝ բնական աղետ, պատերազմ, իրավական սահմանափակումներ, համաճարակ և այլ հանգամանքներ, որոնք դուրս են կողմերի վերահսկողությունից), խախտման վերացման ժամկետը ճշգրտվում է երկկողմանի կարգով՝ կողմերի կողմից նախապես արձանագրված և հիմնավորված փաստաթղթային հենքով: Այդ դեպքում սահմանվում է նոր ժամկետ, որը չի համարվում խախտում, և որը պետք է ամրագրվի պայմանագրին կից հավելվածով: Եթե ֆորս մաժորային իրավիճակը տևում է ավելի քան 120 օր անընդմեջ, յուրաքանչյուր կողմ իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ առանց փոխհատուցման կամ տուգանքի կիրառման: Պայմանագրի լուծումից հետո քաղաքապետարանը կարող է ինքնուրույն կազմակերպել կանգառների սպասարկումը կամ հայտարարել նոր մրցույթ՝ տվյալ լոտի կամ կանգառների շահագործման իրավունքով նոր տնտեսվարող ներգրավելու համար:

Պայմանագրի լուծում

